


ՏՐԻ ԵՒ ՏՆՈՐԻՆ

Ե. ԹՈՐՈՏՅԱՆ

Նամակ կամ որ եւ է

Գրու թիւն պէտք է ուղղել առ Տեօրին. ԱՐՇԱՆՈՅՍ Գրագրի ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

E. THOROSYAN  
Direc.- propr. du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ


ԵԿԵՆՈՍՏՈՒ ԶԱՄՍՐ	
Տարեկան սոյ զստիկ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԻ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆՆԻԿ Եւ թղթատարի ծախքը Խոնքագրութեան վրայ է :

Խոնքագրութեան ուղղուած գրութիւնք կէ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ Կանխիկ վճարելի են

ԿԻՊՐՈՍԻ ՈՐԲԱՆՈՅԻՆ ՇՈՒՐՁԸ



Ա.

Այն արգահատելի միտքը որ ծնունդ տուաւ « Գրական Հրատարակ » ին և Պատասխան մը » ին, վերջերս սկսաւ . . . ծրնունդ տալ աւելի մեծ հրաշալիքի մը, զոր կը յորժորէ « Կիպրոսի Սպանդանոցը » անձառելիօրէն սքանչալոյցի տիրոջսով : Բայց կ'երեւայ թէ այս վերջին ծննդարեւրութիւնը խիստ տաժանելի հանգամանքներ ունի, ըստ որում երկուքն սկսելէն ի վեր երեք եօթնեակներ սահեցան անցան շուրթ պէս և տակաւին նորածինին գլուխը միայն « լուսոյ մէջ կը լողայ » իր կազմութեան մնացեալ մասերը չօչափելի և գերահասկնալի հոծ խաւարի մէջ միտած ծածկուած ձգելով . . .

Աստուածազն Հերքիւլ, բազմաստուածեան ժամանակ մը և աստուածներուն օգնութեամբ հաղիւ քսանի չափ քաջագործութիւնք և հրաշալիք կարող եղաւ կատարել իր ամբողջ կեանքին մէջ : Մեր տկնարկած մարդածնունդ միտքը, անաստուածեան օրերու մէջ և - կարծենք - առանց ոչ ոքի օժանդակութեան իր երրորդ հրաշալիքաբար պիտի աւարտէ թերեւ, իր գործունէութեան մէկ հատիկ տարելընքը չ'ըստարած : Մարդ կը ստեղծէ երբ խորհի թէ աշխարհը և մասնաւորապէս Հայ ազգը ինչ անհաւատարի քանակութեամբ և սրբապիտի սքանչելիքներով պիտի օժանդակուի ինքն ինքն կարողութիւնը և նոյն բեղմնաւորութիւնը չարունակելին միմիայն կէս դար ևս այդ յուսովի գլուխին մէջ :

Յիշեալ գլուխը կամ միտքը (կրկնութիւններէն ըստ կարելւոյն խոյս տալու համար երբեմն պատուանակողը պիտի յիշենք և երբեմն պատուանակեալը) յիշեալ գլուխը կամ միտքը կ'ըսենք, իր առաջին յոգուածով հրատարակը կը զննէր տեսնելու համար թէ արդեօք կամ միտք մը, որուն թելադրութեամբ դժուած այլբէնգիւմը ու շարքութեան արժանի ըլլայ, և իբրև հարսանեակ իր պատեանին մէջ միմիայն ինքզինքը կը տեսնէր : Այս տողերը գրողը մարդասիրաբար այն պատեանին փոքր պատահան մը բացաւ արտաքին աշխարհին վրայ : Երկրորդ գրութիւնը, « Պատասխան մը » անով միայն շահեկան էր որ ամենատարակ կերպով անձնական ըլլալէն զատ անհիթեթ ենթագրութիւններու հիւսուածք մ'էր : Հետեւաբար ժողովուրդը քիչ մը խնդարաց, առանց յառաջ բերելու այն ար-

գիւնքը, որուն կ'սպասէր հեղինակը : Երրորդը՝ այն որ տակաւին բղիւնելու վրայ է այդ անսպառ աղբիւրէն ըստ երեւոյթին նպատակ ունի առնելու հովեր - հանրութեան շահը պաշտպանելու հովեր - զորոնք ո'չ թէ երկինք այլ իր գրիչը կը զլանայ իրեն : Թերեւս ինք ուրիշ կերպ կը խորհէ, բայց թէ որ գրիչը անհնազանդ գրանուի, ինչ ընէ խեղճ գլուխը . . .

« Կիպրոսի սպանդանոցին » յղացման պարագաները ծանօթ են :

Դպրոցական մը իր մօրը կը գանգատի թէ տեսուչը զինք կ'ապտակէ . սաստիկ կը պատժուի . իր կարողութենէն վեր աշխատութեանց կ'ենթարկուի և ին :

Որդեհէր մայրը Որբանոցին Տեսուչութենէն իսկոյն կը խնդրէ որ իր զաւակը իրեն վերագործուի անյայտ . բայց տեսուչութիւնը գոհացում չ'տար այդ փափաքին : Մայրը և դպրոցականին մի եղբայրը « Նոր-Օր » ի միջոցաւ մասամբ կը հրատարակեն եղբուրութիւնը անքր կցելով նաև Որբանոցի Տեսուչին Խորհրդոյ Նախագահ Գեորգ Սարգսեան վարդապետին մի նամակը իրենց գիտողութիւններով մեկտեղ :

Կը հասկնանք մայրական գորովը, կ'ըմբռնենք եղբայրական սէրը . հետեւաբար կը յարգենք անոնց տաղնապն ու հոգը իրենց սրտամերձին համար : Բայց ինչ որ չը կրցանք հասկնալ « Նոր-Օրի » յաջորդ թրուայն մէջ տեսնուած գրութիւնն է « Կիպրոսի Սպանդանոցը » անհաւատարու վերնագրով գրութիւնն որուն աւարտումը տեսնելու բարեբաղդութիւնը չ'ունեցանք, թէ և երեք շաբաթ սպասեցինք, և որ պատճառ եղաւ ներկայ յօդուածիս :

« Կիպրոսի Սպանդանոցը » գրողին մարմալը գէթ առժամապէս գոհացնելու համար զինք պիտի նկատեմ իբր հանրութեան շանեռուն ընդհանուր դասախազ, և առանց ալէն ձախէն հակադասութիւն և մեղմացուցիչ պարագաներ փնտռելու . իր կողմէն անչառ իբր ջախջախիչ ընտրուած և ընդունուած փաստերով միայն պիտի զբաղիմ :

Արդ՝ ընդհանուր դատախազը իր ամբաստանութիւնը և միեւնոյն ժամանակ իր ապացոյցները կը հիմնէ դպրոցականին նամակին հետեւեալ մասին վրայ : « Երբ առաւօտուն անկողնէս կ'ենեմ, կամ կը լուսացուիմ կամ ոչ, կ'սկսին աշխատեցնել և այնպիսի ծանր գործեր կուտան որ կարողութենէս վեր է . երբ ըսեմ որ մինակ

չեմ կրնար ընել, այդ խօսքը ըսելու համար կը բարկանայ « Տեսուչին համար ընել կ'ուզէ » եթէ անգամ մ'ալ կրկնեմ կ'սկսի ապտակել . բայց ինչ ընեմ ձայն չ'եմ կրնար հանել . կերակուրէ կը զրկեն . հագուտի մասին ալ ունեցածներէս զատ չ'պիտի տան երբ գացի ճերմակեղէն ուղեցի ըստ որ ալ գուն իրաւունք չ'ունիս որ և է բան առնելու . ուրիշ անախտժ գործ մ'ալ տրիւն . այն է գործարանին աղտոտութիւնները վերցրնել . եթէ այսպէս շարունակուի, գիտցէք որ մեծ հիւանդութեան մը ենթակայ պիտի ըլլամ » :

Այս ամբաստանագրոյն ընթերցումէն ետքը . ընդհանուր դատախազը իր դատաւարութեան կ'սկսի սա սրտառուչ բառերով . որոնք ունկնդիրներուն ուղղուած են :

« Այս տողերը գրողը, այս տրտունջը յայտնողը որք մըն է 16 տարեկան . անկեալ ընտանիքի զաւակ, որ Կիպրոսի Որբանոցին խնամեցը յանձնուած է յանձնարարութեամբ տեղւոյս ազգայիններուն » :

Եւ խօսելէն ու խօսելէն ետքը այն բան սրտայոյզ շեշտերով որ ընթերցողին վրայ մատակցելի կուգայ . . . խնդալէն, ընդհանուր դատախազը իր փաստաճառը կը փակէ բացազանչելով :

« Ինչո՞ւ չի բողոքենք ուրեմն երբ որբեր պատուարելու, և նոր ուղամիտ սերունդ մը պատրաստելու յատկացուած հաստատութիւն մը վերածուած կը տեսնենք սպանդանոցի (!) մը ուր կ'երթան ոչնչանալ (!!) հայ ապագայ սերունդի սերմերը (!!) » :

Այսպիսի պարագայի մէջ լուսութիւնը ուրիշ բան չի նշանակեր բոլոր եթէ քաջալերել մեղանայ հեղինակները ու գործըւած սճրին վրայ սճիր մը ևս աւելցնել » : Խօսինք ուրեմն . Տիար ընդհանուր դատախազ, խօսինք բայց խօսելու չ'սկսած ներեցէք որ սա ձեր ամբաստանագիրը անգամ մը զննենք, քննենք, չափենք, կշռենք, տեսնենք ինչ կ'արժէ :

Ինչպէս տեսանք . 16 տարեկան դպրոցականէ մ'է այդ գրութիւնը որ ընդհանուր ամբաստանագիրը և շարքութեամբ շատ մը հրատարակագիրներու խմբագրականները կը գերազանցէ միայն բառ մը կայ որ հեռու է ընթացիկ հայերէն ըլլալէ և այդ բառն է գնացի :

Աշակերտը Պալեսցի ընտանեաց զաւակ է հետեւաբար մօրը գիրկը սորված չ'է այդ յիշեալ բառը ուրեմն ուրիշ կաթեցաւ հոս :

Մեր այս գիտողութիւնը կուտ մը չի արժեր առ այժմ . բայց հարկ է որ հոս արձանագրուած գտնուի :

Հիմայ գանք Որբանոցին Տեսութեան վերա- գրուած «տեղեկութեան և սկսինք խոստարագոյ- նէն, զոր ընդհանուր գատարազը նոսր տառերով կը ներկայացնէ հասարակութեան»

Որիչ անախորժ գործ մ'աչ տուին, այն է գործարանին աշոտարիւնները վերցնելը» Ահա մեր պատասխանը .

Գործարանը այս յայտարարութիւնը ընելով և ընդհանուր գատարազն ալ անոր վրայ յենելով՝ մին իր ամբաստանագրին կա- րի որութիւնը, միւսն ալ իր պաշտօնին լրջու- թիւնը այդ անանուանելիներուն հետ մէկ- տեղ վերցուցած կ'ըլլան :

Եթէ փոխանակ վերցնելի չաչնչ, մաք- րեղ կամ շոտայ ըլլար, մի քիչ պիտի երկմը- ատէինք . բայց վերցնելին համար վտասօրէն կ'ըսենք, ՍԻԱԼ է . սա բանաւոր պատճառով որ աղտեղութիւնները կը վերցունին այն ա- տեն երբ ակնարկուած գործարանը չ'ուար- բերի զեղջիկական կամ գաշտերու և լեռ- ներու մէջ առժամայէս պատրաստուած այն գործարաններէ, որոնք իբր պատուանդան վտակուած երկու քարերու մի քանի բը- թաչափ խորութիւնը կ'ունենան, և որոնց պարունակութիւնը, արդարեւ, գրեթէ ժամը ժամին վերցուելու է յաջորդներուն տեղ պատրաստելու համար, մինչդեռ Կիպրոսին հանգստավայրերը չ'են տարբերի իրենց Պու- սայ և Գահիրէի համայնակուլ պաշտօնակից- ներէն . գէթ յօգուածագիրս այնպէս տե- սուս վեց տարի առաջ՝ Եւ թէպէտ այն ժա- մանակ սրբանոցը գեւա գոյութիւն չ'ունէր, բայց ընդունել թէ հակառակ քաղաքին սո- վորութեան, հակառուջական և անհասար- բական այդ տեսակ անկիւններ կը գտնուին յիշեալ հաստատութեան մէջ, պարզապէս զանազան պիտի ըլլար : Առտի ապահովա- պէս կրնանք բնել թէ այդ վերցնելը բառը ճշմարտութիւն մը չ'որոշայտեր :

« Հագուստի մասին ալ ունեցածներէս զատ չ'պիտի տան . երբ գնացի ճերմակեղէն ուղեցի բաւ որ ալ գուն իրաւունք չունիս որ և է բան առնելու : »

Կերեակայէ՞ք աչակերտ մը որ գործա- րանի աղտոտութիւններ կը վերցնէ և որ փախուցեալ չունի : Նոյն հագուստով նոյն ճերմակեղէնով զորոնք պիտի ունենայ այդ անախորժ գործարանի միջոցին, պիտի ներկայանայ — եթէ ոչ այցելուներուն — գէթ ուսուցիչներուն և իր ընկերներուն ճա- չի, խոտի, պտոյտի միջոցին . ի լուր և ի տեսնողները գործի ժողովուրդը — անեն օր երթեկեկող աչակերտներուն . որոնք՝ մեծ և ծանրագլուխ անձերու կեղծաւորութիւնը չ'ունենալով տակաւին՝ անցած գարձածը տանիքներու վրայ պիտի պոռան :

Արդէն առանց մտադածին աղտարաւ- ճութեան ալ . աչակերտին հագուստն ու ճեր- մակեղէնը ոչ նուազ աղտալի պիտի ըլլան մի քանի օրուան մէջ . քանի որ մարմնական աչխատութիւն կայ Որբանոցին կանոնագը- րոյն մէջ : Այդպիսի հաստատութեան մը մէջ ալ աղտոտութիւնը ներելի կամ հիւ- րընկայելի կարծել, աղտոտէր ըլլալու անվը- րէպ նշան մ'է : Ասկէ զատ պէտք է նկա- տի առնել որ բողբոջարկուն՝ այս հաստա- ծին մէջ՝ աւելի թէական է քան թէ հաս- տատական, ինչ որ միւսնոյն բանը չ'է : Տղան չ'ըսեր որ « հագուստ ուղեցի » չ'ուուն . ճեր- մակեղէն ուղեցի՞ բացարձակապէս մերժե- ցին » այլ կ'ըսէ « հագուստ չ'պիտի տան . ճերմակեղէնի ալ իրաւունք չ'ունիս, « ը- սաւ » :

Ինչպէս կը տեսնուի, այս բառերը որո- շապէս կատարուած եղելութեան մը թարգ- ման չ'են կրնար ըլլալ : Արդ կարելի՞ է որ ազգային շահերուն պաշտպան կանգնելու տենչով այրող մրկող մարդ մը անորոշ կա- ցութեան մը վրայ հիմնուելով բոց ու կը- րակ արձակէ յաջ և յահեակ : Մանաւանդ հոն երկու տառէ բաղկացեալ բառիկ մը կայ — աչ — որ ներկայ պարագային մէջ շատ բան կը նշանակէ : Ինչպէս կ'ըլլայ որ այս կէտը մեր ընդհանուր գատարազին աչքէն վրիպած է :

Վրիպած կամ ո՛չ, մեզի համար էա- կանը այն է որ ամբաստանագրին այս մասն ալ ստիպուեցաւ անձայն անչաչակ քաղաքի իր նախորդին քով, վերցուելու կամ թաղ- ուելու համար :

Գործարանի, հագուստի և ճերմակեղէ- նի խնդիրները, որոնք մեր ընդհանուր գա- տարազին հայրենասիրական զայրոյթը զըր- գըւած և աղղասիրական արիւնը եռացու- ցած էին, փճանալէն ետքը ուրիշ ի՞նչ կը մնայ՝ իբր ամբաստանութիւն :

Աշխատութիւն : աչակերտներուն ա- մենքն ալ կ'աշխատին, ըլլան թոշակաւոր ըլլան անթոշակ : « Կարողութեանէ » վեր է » բառերը կենանք հագուստի և այլնի քով զրկել միւսնոյն պատճառաբանութեամբ : Կերակուրէ զրկել, երբեմն ալ ապտակել ա- մենէն գործով ընտանիքներու և ամեն գարոցի մէջ կը գտնուին : Անշուշտ փախա- քելի է որ մարմնական պատիժը բոլորովին անհետանայ կրթական հաստատութիւննե- րէն . բայց միւսնոյն ժամանակ պէտք է նաև միջոց գտնել միակերպելու մարդկային կարգուած քը, խառնուած քը և այլն : Գերմա- նացիք, որքան աշխարհիս թերեւս առաջին մանկավարժներն են, պարագային համեմատ մինչև այսօր կը գործադրեն իմաստունին պատուէրը . « որ ոչ լուրցէ ունկամբ, լուր- ցէ թիկամբ », առանց երբէք « սճրագործ » « մագործ » պատուանուններն արժանանալու, վասնզի առաջնակարգ ազգասէրներ չ'ունին թերեւս :

Հիմայ որ մեր ընդհանուր գատարա- զին այնքան խնամքով կանգնած լատտակեր- տը այնքան դիւրութեամբ քանդուեցաւ, — և ո՛վ գիտէ որպիսի գոհունակութեամբ ընդգրկած — ամբաստանագիրը վերցուած- ներուն մէջ խառնուեցաւ, ալ հանդարտ սրտով կրնանք տեսակցել այդ համակրելի պաշտօնակալին հետ, որուն ըսելիքներ ու- նինք խոսարհարար :

ՈՒՂՂԵԼԻ Մեր շարժութ օրուան թերթի ազգային լուրերու բաժնին մէջ գրաշարի անուշադրու- թեամբ « Պաշտօնական » վերտառութիւնը զետեղուած էր հազարդուած լուրերուն զը- լուրը : Եւ սակայն այդ լուրերը ո՛ր և է պաշտօնական հանգամանքէ զուրկ են և լոկ իբրև պարզ տեղեկութիւն խրկուած են մեր մասնաւոր թղթակցէն :

Գահիրէի Հայոց Առաջնորդարանի գրագիր- ներէն Տ. Գուրգէն Միրիճանեանէն կը խնդրուի « Արշալոյս » ի խմբագրատունը հանդիպել, լու- սաբանութիւններ տալու համար նարկիլէճեան թէրէքէի շարժ կամ մէջ գործածներուն վրայ, և Օր . Սօֆի Գալանթարի այդ քերեփին պատ- ճառաւ իրեն զէմ ունեցած գանգառներու մա- սին, որոնք թերթերու էջեր գրաւելու բնոյթ ունին :

# Ա Չ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Բ Ե Բ

(ՊԱՇՏՕՆԱԿԱՆ)

Սղէքսանգրիոյ Հայոց Թագ . Խորհուրդը թէև Միքայէլ պէյ Ռէյիզիանի աջակցութիւնը խնդրած էր նորաչէն կառուածի հսկողութեան համար, սակայն նկատելով որ Միքայէլ պէյ իր անձնական ծանր գրազմանց պատճառաւ յաճախ քաղաքէս կը բացակայի և հետեւաբար չի կըր- նար որոշ պատասխանատուութիւն ստանձնել հսկողութեան գործին մէջ, պաշտօնադրով մը ի- մացուց ճարտարագետ Տիար Պողոս Խրտրեանի թէ հսկողութեան ամբողջ պատասխանատու- թիւնը իր վրայ կը ծանրանայ և հետեւաբար ամեն անգամ որ ամենաթեթեւ զանցառութիւն մը իսկ նշմարէ՛ պարտաւոր է նոյն հետայն տե- ղեկագրել որոց որ անկ է :

Աղքատ . Ընկերութեան ի նպաստ արուած թատերական երեկոյթին հաշիւները այս շաբ- թու Կարգ . Մանախմբի Ատենապետ Տիար Զա- րեկ Սըվազլըի կողմէ մատուցուեցան Մայր-Դի- ւանի Ա . Ատենապետ Վսեմ . Կարապետ պէյ Ռէ- յիզեանի և հետեւեալ վիճակը կը ներկայացնեն

Տոմսակներու վաճառումէ զրը . ողջ	41247, 5	
Նուէր Վսեմ . Պողոս բոշայէ » »	2000	
» » Լեւոն պէյ Յակոբեանէ	1420	
» Տօքթ . Վարէհուսթ բաշայէ	97, 5	
Համագումար զրը . ողջ		44765
ԾԱԽԻՔ		
Թատեր . խմբին զր . ողջ	11700	
Տպագրութ . ծաղիկ , Պաշ-		
տօնեայ եւլն .	1280	
Գանձուածի գովախօսն	1200	
	14180	

Զուտ հասոյթ զրը . ողջ 30585

Այս տարուան ներկայացումը, հակառակ տեղացուց մէկ մասին մերժումներուն, 3939 1/2 զրը . ի հասութի առաւելութիւն մը կը ներկա- յացնէ նախորդ տարուան երեկոյթին վրայ : Այս զեղեցիկ արդիւնքին մէջ աշխատութեան յոյժ գնանատելի բաժին մը ունեցած է Մայր-Դիւա- նի Բ . Ատենապետ Տիար Զարէկ Սըվազլը :

Աղք . Ընկերութեան արդի բարգաւաճ վի- ճակը տարակոյս չ'կայ որ մեծ ուրախութիւն պիտի պատճառէ մեր բոլոր զթատեր ազգային- ներուն և իրաւամբ հանրային քաջակրթութեան արժանի պիտի ընէ այդ օգտակար մարմինը : Աւելորդ չ'ենք համարի քանի մը թուանշան- ներով հաստատել 15 ամսուան շրջանի մը մէջ ընկերութեան ըրած յառաջընթացութիւնը :

## ՎԻՃԱԿ 1899 ՏԱՐԻՈՅ

Անդամավճարք	զրը . ողջ	12190	
Թագ . Խորհուրդէն ամս . նպաստ		14000	
Գանձանակ , պնակ եւլն .		3736, 4	
Ընդհ . մուտք		զրը . ողջ	29926, 4
		ԵՂՔ	
Մէկ տարուան մէջ գանա- ղան կարտեալներու գանազան կարգի նպաստք	զրը , ողջ	37823, 2	
Բաց 7896 զրը . 8 միլիէն			
Ամսական պիւտճէ 3152 զրը . ողջ			
Ամսական բաց	658 » »		
Նախորդ Տնօրէն ժողովը իր կելեմուտքի հաշուոյն մէջ անցուցած է կարգ մը գումարներ որոնք գոյութեան իրաւունք չ'ունէին այնտեղ . Այս կարգէն են հետեւեալներն :			
Ա . Հանգուցեալ Նուպար բաշայի մտնուան առթիւ իր ժառանգորդաց կողմէ թաղապետու- թեան միջոցաւ վճարեալ 20000 զրը . զ զոր Աղք . Ընկերութիւնը մէկ կողմէն իբրև բացառիկ նը-			

էր եւ միւս կողմէն իբրեւ ծախք անցուցած է իր ելեւմուտքին մէջ : Այս գրամը , սակայն , Աղք . Ընկերութեան նուիրուած չ'էր իր պէտքերուն գործածուելու համար , այլ թաղ . խորհրդոյ իրաւասութեան տակ զրուած էր գողթականները իրենց հայրենիքը վերադարձնելու միակ նպատակին յատկացուելու համար : Եւ սակայն ի վերջոյ , ինչ ինչ թիւրիմացութիւններու բերմամբ , վերոյիշեալ գումարին մասակարարութիւնը փոխանցուեցաւ Աղք . Ընկերութեան , եւ ասիկա անով մանաւանդ կ'ապացուցուի որ Տնօրէն ժողովը անոր համար առանձին հաշիւ բռնեց եւ անոր առանձին համարատուութիւնը բրաւ վստահ . Պողոս բաշային : Ահա այս պատճառաւ մենք 20000 զրշ . ը թէ' մուտքէն եւ թէ' ելքէն զեղջած ենք :

Բ . — Նախորդ Տնօրէն խորհուրդը իր ելեւմուտքին մէջ անցուցած է նմանապէս 2000 զրշ . ի նուէր մը զոր ստացած է վստահ . Պողոս բաշային' անցեալ տարուան թատեր . ներկայացումին առթիւ : Մենք այդ գումարն ալ զեղջած ենք մուտքէն զի անիկա թատերակ . հասոյթին մասը կը կազմէ եւ ընկերութեան գրամական անձկութեանը պատճառաւ գանձուած է ներկայացումէն առաջ : Անոր տեղը հետեւաբար թատերական հաշիւին մէջն է :

Գ . — Նմանապէս զեղջած ենք հինգ Արեւելեան Բուժէլիի արժեթղթոց փոխարժէքը ներկայացնող 2160 զրշ . ի գումարը զոր նախորդ Տնօրէն ժողովը իր ելեւմուտքի երկու կողմն անցուցած է : Այդ արժեթղթերը 1894 ին ընկերութեան կառուցուած էին բարեօրէն ազգայնոյ մը կողմէ եւ յանուն Թաղ . խորհրդոյ Օսմ . Պահման պահուած էին ու 1899 ին Աղք . Ընկերութեան անունին փոխանցուեցան : Տնօրէն ժողովը կարող էր իր հաշուեկշիւին մէջ անցունել զանոնք իբրեւ գոյք , բայց ո'չ երբէք ելեւմուտքին մէջ որ աւելորդ է ըսել թէ լոկ գրամական շարժումը կը ներկայացնէ :

Նախորդ Տնօրէն ժողովը իր 1899 ի ելեւմուտքը մատուցանելէ յետոյ , մասնաւորապէս 1900 փետրուար եւ մարտ ամիսներուն մէջ զբրամական ա'յնքան նեղ կացութեան մէջ կը գտնուէր որ հարկադրուած էր թատեր . ներկայացումին հասոյթները մէկ կողմէն գանձել եւ միւս կողմէն ծախել . այնպէս որ հրր 1900 մայիս 29 ին թատերական հաշիւ ներկայացուց , արդէն 12875 զրշ . ողջը ծախսած էր մինչեւ 25 մարտ 1900 , ու միայն 12420 1/2 զրշ . գումար մը յանձնուեցաւ Թաղ . խորհրդին իբրեւ կշիռ ներկայացման հասոյթի :

ՆՈՐ ՎԻՃԱԿ ( 1 Մայիս 1900 - 30 Յունիս 1901 )

ՄՈՒՏՔ

Կշիռ նախորդ տարւոյ թատերական ներկայացման զրշ . ողջ	12420, 5
Թաղական խորհրդէն ամսական նպաստի »	15000
Անդամավճարք »	7955
Գանձանակ եւ պնակ »	4724, 2
Նուէր զանազաններէ ձեռամբ Բէյիզիան պէյի »	8775
Նուէր Ձէրքէզիան ժառանգորդաց ձեռամբ Բէյիզիան պէյի »	7068, 5
Նուէր Սթանի որդոց »	4875
Նուէր Տ . Նր . Տէրվիչեանէ »	487, 5
Չանազան մանր նուէրներ »	433, 7
Համագումար մուտք զրշ .	61739, 4
ԵԼՔ	
Չանազան նպաստներ գանազան կարօտեալներու զրշ . ողջ	59565, 7
Ստուուկը պատրաստ »	2173, 7
Ասոր վրայ աւելցնել այս տարուան թատեր . երեկոյթին հասոյթը	30585
Շնորհիւ նորընտիր Մայր Դիւանին , թաղապետութեանէն գանձելի արեւիկան նպաստը »	5000
Համագումար պատրաստ գրամ	37758, 7


Այս թուանշանները շատ պիտի ծախուի կերպով երեք բան կ'ապացուցանեն :

Ա . — Չոր նայելով որ նախորդ Տնօրէն ժողովը իր մեկուսացմամբ թէ' իր եւ թէ' իր համակիրներուն անդամավճարները գաղտնիցուած եւ հասոյթի այդ ճիւղին մէջ ընկերութեան նիւթական վնաս մը պատճառած է' սակայն միւս կողմէն ժողովուրդը , որ անհատական հաշիւներու հետ գործ չ'ունի , պնակի եւ գանձանակի միջոցաւ եղած գրամական հաւաքմանց աւելի առատաձեւեռն եղանակաւ մասնակցած է քան թէ նախորդ շրջանին մէջ :

Բ . — Ընկերութեան գումարը գտնուող անձնաւորութիւնը իրենց հեղինակութեամբ բացէն քանի մը հարիւր ոսկիի հասոյթ հաւաքած եւ թաղապետութեանէն տարեկան 50 ոսկեոյ մշտական հասոյթ մը ապահոված են :

Գ . — Ընկերութիւնը իր ամսական պիւտճէն քառասուն ոսկեոյ բարձրացուցած ըլլալով հանդերձ , այսօր ո'չ միայն ո եւ է բաց չ'ունի' այլ մտաւորապէս չորս հարիւր անգը . ոսկեոյ գրամագումար մը . գրամագումար' որ իր իմաստուն գործածութեամբ պիտի ծառայէ ի հարկէ լաւագոյնս միթիթարելու մեր տառապիւլ հայրենակիցները :

ՀԵՐԲՈՒՄ ՄԸ



« Նոր-Օր » ի թիւ 96 ին մէջ « Չայն Կիպրոսէն » վերնագրով հաստուած մը կարդացի , որ կը պարունակէր 16 տարեկան որբի մը բողոքները , Կիպրոսի Կրթարան-Որբանոցին մէջ Տնօրէնին ձեռքէն կրած պատիժներուն նկատմամբ :

Բողոքը որչափ տղայամտութեան արդիւնք , նոյնչափ աւելի տղայամտութիւն կրնանք համարել զայն իբր լրագրական նիւթ — բնականաբար առ ի չդոյնէ -- հանրութեան դատաստանին թողուիլը :

Կարծեմ ինձ նման շատեր ալ պիտի սկսին մտածել որբին ըրած բողոքներուն վրայ թէ' ինչ են արդեօք եւ ինչ տեսակ են անոր կրած պատիժները :

Ահա ինչ որ կը գրէ եւ ինչ որ ամենէն աւելի զօրեղ փաստ հանրութեան ներկայացուցած է :

« Երբ առաւօտուն անկողնէս կ'ելլեմ , կ'ըսկըսին աշխատցնել . ա'յնպիսի ծանր գործեր կուտան որ կարողութեանէս վեր է եւլն . թէ ձեռմակէզէն չ'պիտի տան , եւ ուրիշ անախորժ գործ մ'ալ տուին , այն է գործարանին աղտոտութիւնները վերցնել եւլն » :

Կարծեմ աւելի բան չ'կայ : Կիպրոսի մէջ քանի մը տարի ապրած լինելով' շատ մտէն ծանօթ եմ Կիպրոսի Կրթարան Որբանոցի Տնօրէնին բնաւորութեան . եւ աւելին կայ , ճիշտ մէկ ու կէս տարի ալ այդ որբանոցին մէջ 18 աշակերտաց կօշկակարութիւն սորվեցնելու առթիւ ամեն օր երեք ժամ որբանոցին մէջ կը գտնուէի :

Ամեն օր թէ' իմ , եւ թէ' վերձակին աշակերտներէն մէկ երկու հոգի Որբանոցին մէջ իրենց պատկանող գործերով կ'ըբաղէին , գործեր' որոնք երբէք ծանր կոչուելու հանգամանք չ'ունէին . մասնաւոր թէ' իմ եւ թէ' ուրիշներու գիտցածին համեմատ 2-3 սպասուոր կիներ կային եւ այժմ ալ կան , որ գրեթէ բոլոր գործերը կը տեսնէին եւ աշակերտաց կը մնար փուռին մէջ գործել , պարտէզ մշակել ու ստոնց նման զբօսեցուցիչ գործեր տեսնել . Ուր կը մնայ ուրեմն իրեններուն փոսփայանքէն չփացած որբ տղուն խօսքերը թէ' « ծանր գործեր կ'առաջարկեն ինձ որ մինակս չ'եմ կարող ընել » :

Իսկ գալով ապտակին , արդէն նախագահ Հայր Սուրբը անկեղծօրէն մի բառ միտջէ յայտնած է' թէ աշակերտին ըմբոստ վարմունքը պատճառ եղած է , որ կարծենք ամեն ոք ալ իւր գաւկիին կուտայ' երբ վերջինը ըմբոստութիւն կ'ընէ , հետեւաբար աւելորդ էր որ ամբաստանիչ թերթը այդչափ առաջ քալէր անխղճօրէն . . . : Գանիցս պատահած է ինձ որ դասի ժամերէս 10-15 վայրկեան առաջ գնացած , եւ հան-

զրկած եմ աշակերտաց զբօսանքին , յորում արեւորէնը պատելով անոնց մէջ կը հսկէր զբօսանքին վրայ : Պատահած է երբեմն որ աշակերտներէն մին , իր բնագրին հետեւելով , աղտոյական անկարգութիւններ ըրած է : Տնօրէնը հանգարտութեամբ զայն իրեն կոչելով յորդոր ոձ , խրատած , եւ երբեմն ալ թեթեւ սպառնալիքներ ըրած է « ճաշէ զրկել , ոտքի կեցնել , հրապարակաւ յանդիմանել , ծնողացը գրել կամ ապտակով պատժել » բառերով եւ ոչ թէ յիբաւի ապտակելով , ինչպէս որ ուրիշ վարժարաններէ լսուած են խոշոր ապտակի ձայներ եւ անոնց արձագանքը դեռ մինչևեւ ցարդ կը մնայ . կը կարծուի թէ մտոցանք զանոնք . . . :

Վերոյիշեալ յորդորակներու կարգը կըրնանք հաշուել եւ այդ 16 ամեայ որբին ապտակի ինչիբրն ալ , որ լեռներէն իջած ձիւնազուհեման երթալով խոշորացած է մինչև « Նոր-Օր » ի լայնարձակ էջերուն մէջ սպրդիլը :

Գալով ձեռմակեղէնի խնդրոյն , բոլորովին տղայական եւ անհիմն կը նկատեմ եղած գանգատները . եթէ իր ունեցածն ուրիշ չ'տրուի իրեն ' Գանի' օր , քանի' շաբաթ կրնայ հագնիլ սուանց փոխելու իրեն ձեռմակեղէններն . միթէ այդ անմաքրութեան կը հարգուրծեն Տնօրէնը եւ ընկերները :

Որ աստիճան հաւատարի է որ « գործարանը մաքրելու առաջարկը ընդ մէկը » — եթէ ըրած է — թոյլ տայ որ ներքին եւ արդէն մաքրութիւն բուրած սեղ մը աղտոզուութիւնը բոյն դընէ :

Բանտի մասին գրուածները շատ չափազանցուած եւ խեղաթիւրուած են . ինչպէս որ վերջերս Կիպրոսէն նոր հասած վատահիւն անձնաւորութեանէ մը ստուգեցի , նախորդ խոհարարը իր հայրենիքը մեկնած լինելով , իրեն հասակակից դպրոցականի մը յանձնուած է խոհարարի գործը , ընդ հսկողութեամբ ձերուսի տիկնոջ մը' առժամակ կերպով վարելու համար . եւ այդ սենեակին է որ յանցաւորը մէկ երկու օր պսուկած է իբրեւ պատիժ , ինչպէս որ առաջնորդ հայր սուրբը գրած էր :

« Կեղտոտութիւն վերցնելու » մասին վրայ ալ ծանրացած է ամբաստանող թերթը . սակայն ինձ նման բոլոր Կիպրոս այցելողները զիտեն որ որբանոցի ընդարձակ ձեմեկիներուն մաքրութեան նմանը չ'կայ , եւրոպական սխարիւղ շինուած . ըսել է տեղի չ'կար յերիւրանք ընելու թէ' « աղտոզութիւն վերցնել տալ կ'ուզեն » :

Տնօրէնին հոգածութեան եւ իր որբերուն վրայ ունեցած դուրզութանքի մասին արդէն քանիցս գոհութեամբ կարդացած ենք « Արշալոյս » ի մէջ ակնաստեսներու կողմէ գրուած . միթէ այս դովետաւից գրութիւնները իրաւ չ'էին' . կամ եթէ բաղդատութեան զենքը զանոնք որբի մը — որ կ'ուզէ եղբ որբանոցը թողուի իր ծնողաց հետ Ամերիկա մեկնիլ — գրածներուն հետ . ո՞րը աւելի լուրջ եւ ստոյգ պէտք էր ընդունիլ :

Բայց կեցցե'ն այն բարեօրիտ ազգայինները որ ճշմարտութիւնը խօսիլ կը սիրեն եւ ո'չ թէ տղու մը խօսքին հաւատալով' ինչպէս կ'ընեն Նոր-Օրի վարիչները Կրթարան Որբանոցին անունը աղարտել կարենալու համար — եթէ երբէք կրնան — « Սպանդանոց » յորջորջելով զայն ամենայն կեղծաւորութեամբ :

Մեղք է մեզի . մե'ղք . . . :

Հարկաւ « Նոր Օր » ի 96 եւ 97 թերթերը կարդացին Կիպրոսի հայերը եւ այսօր ալ իմ ճշմարտութիւններ վեր հանող գրութիւնս պիտի կարգան տեսնենք ինչ պիտի վճեն , Յարութիւն պէյ , Իւթիւճեան , Ամիրխան , Աբգար , Պողոս , ձեռմակեան էֆէնտիներն , որոնք ամեն օր կ'այցելեն Կրթարան Որբանոցի եւ ո'չ թէ սպանդանոցը . . . :

ԼԵՒՈՆ Մ . ԳԱՅՍԷԼԵԱՆ

Մեր այսօրուան թիւը , ինչպէս կը տեսնուի , միայն Ազգային կարեւոր լրոց եւ Կիպրոսի Ազգային որբանոցի ընդարձակ յօդուածներուն յատկացուած լինելով , զուրկ է զանազան լուրերու բաժիններէն . այս պատճառաւ ներդրութիւնը կը խնդրենք մեր ընթերցողաց :

ՄԹԱՌ ԼԱՅՖ  
ԼՈՆՏՈՆԻ ԱՊՈՂՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափա-  
ւոր ապահովագրի . — Ապահովագրի հնու-  
թեան համաձայն չահու առաւելութիւն . —  
Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վը-  
ճարմանց յապաղումի պահուն . — Չափող  
պարագաներու մէջ անմիջական հաշուար-  
գարութիւն . — Շահու բաժանում ամեն ՀԻՆԻ  
ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԵՅՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ Եգիպտ սի

ԹԱՅՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԵՒ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՂ

— ԾՅՕԾ —

Ի Շարս Մոնթանէս Աշի

Խիվիլիի ղեկարանին ղիւնացի փողոցին մէջ  
քիւ 7

Սոյն հաստատութեան մէջ կ'աւանդուին  
Մայրենի լեզու բժրանսերին , կրօնագիտութիւն  
և ամեն գիտութեանց սկզբունք . Օրերգաց հա-  
մար պմեն ստակ ձեռագործք :

Մտոգր գո՛ւ պիտի մնան իրենց զուակաց  
արեւած մասնուոր խնամքներէն . փափաքողք  
կրնան ղիմիլ ի վարժարան ամեն օր 8-11 , բու-  
ցի կրբակէէ :

ԿՕՇԿԱԿԱՐ

Փ. ԵՒ Յ. ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՐԱՐԻ

Պարս-Մարտի քիւ 39

— ԾՅԾ —

Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի  
ձեռքէ ելած , ֆրանսական նորաձեւութեանց  
համադրատախանոց , սարքերը կոշտերու ցա-  
ւերէն ազատ պահոց և դիմացկուն կոշիկ-  
ներ :

Կ'իմեցէ՞ք ի Պարս-Մարտի թիւ 39  
խանութիւն մէջ հաստատուած Պէշիրեան եղ-  
բայր , որոնց գործածած ապրանքներու  
ստիւկանութիւնն և ձեւերու մասին ունեցած  
հոգածաթիւնը ամեն ասարակոյտէ վեր է :  
Պէշիրեան եղբայրք իրենց յաճախորդաց ը-  
րած յանձնարարութիւնները փութով և  
մեծ խնամով կը պարտասեն :

Բաւ է միայն մէկ անգամ՝ դիմել ի-  
րենց . ապահովագրէս մնայուն յաճախորդ  
պիտի լինիք :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԵՒՄԻ 21 ՅՈՒՆԻՍ 1901

928	4925	5634	222	4743	577
1174	1746	1750	2465	2024	4225
4276	5692	6750	7058	7151	7800
7249	8042	8308	8312	8320	8593
9208	9725	9959			

ՀՐԷԻՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՄԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԵՒՄԻ 21 ՅՈՒՆԻՍ 1901

4961	6020	3122	6612	68	395
561	1173	1212	1316	2497	2778
4241	4529	4574	5479	5688	6584
7003	7366	7410	8448	8795	8924
8966	8993	9081	9392	9607	9801

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե . ԲՈՐՈՍԵԱՆԻ

ԳԱՌԼՕ Մ - ՊԱՍՄԱՃԵԱՆ  
ԵՒ ԸՆԿԵՐՔ

ՕՔԷԼ ՄՕՆՖԷՐԱԹՕ ԱՂԵՔԱՆԴՐԻԱ

Պատիւ ունինք ծանուցանել արդոյ հասարակութեան թէ վերջիս հաստատուած ըլլա-  
լով հրապարակս , կ'ընդունինք և կ'ստանձնենք ամեն տեսակ և ամեն ազգի ապրանքաց յանձ-  
նարարութիւնը , ինչպէս ժամացոյցի , զո՛նարեղենաց , արեւելեան և եւրոպական զանազան տե-  
սակ զուեւոր և ճերմակ քարերու , Գոլոմպիակոն ֆոնկրաֆներու , ինչպէս նաեւ գրուած և  
անգիր խորովակներու — գովան — ( մեծաքանակ ) . եւրոպական նրբաճիւս կողովիկներու և հո-  
սեղենաց :

Մասնաւորապէս համաձայնած լինելով Պոլսոյ Անտէլիպ ( Մարտիրոս Պէլլէրեան ) սան հետ,  
որուն ապրանքները մեծ գնահատման արժանացած են նոյն իսկ եւրոպական հրապարակաց վը-  
րայ , միշտ ի մթեր ունինք յիշեալ հանրածանօթ տան ամեն տեսակ ապրանքները . ինչպէս Re-  
producteur Andelib ( ֆոնկրաֆի անեղ ) որ անմրցելի է հրապարակին վրայ , և Գոլոմպիակոն  
ֆոնկրաֆներու ներկայացուցիչ Մ . Պասէօնի սքանչելոյն առարկայի եղած է :

Մեր սրամազրութեան տակ ունինք Անտէլիպի գործարանին զտնագան նուագներն . ինչ-  
պէս Մակեդոնի , Բալեոն , Ուր ևն . և ֆոնկրաֆի համար տաճկական եղանակներու վրայ չափ-  
ուած հին և նոր վարպետ երգողներու ընաիր Գովաններ :

Կ'ստանձնենք կատարել Մաքսոյին ամեն տեսակ գործողութիւնք փութով և չափաւոր  
փոխարինութեամբ :

Կը գանձենք զանազան երկիրներու փոխանակարքեր :

Բաց սասի ընկերութիւնս Լոնտոնի , Պոլսոյ , Գահիրէի , Եաֆայի և Երուսաղէմի մէջ թըզ-  
թակիցներ ունենալով , կ'ստանձնէ այդ տեղերուն համար ամեն տեսակ ներածում և արտածում :  
Մեր հասցէն է

CARLO M. BASMAJIAN et Cie .

Okelle Monferrato  
Alexandrie

Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄՐԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիսթօլ Օրթէլի ճիշդ գիմաց ,  
Գաֆէ Տը Լա Պուրսի կից .

Հին եւ նոր սեռերու զարդարութիւն , ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄՍԱՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են և ասոնցմէ մինչև ցարդ  
17, 000, 000 ծախուած է :

400 է աւելի վիսյակներով և մեշայներով վարձատրուած , երաշխատուեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա.Ռ.Ա.Ջ.ԻՆ ՄՐՅԱՆԱԿ


Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է :

ՀԱԳՐԱՑՈՒՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՐԲՈՒՆԻՔԻՆ

ՀԱՅՐԱՑՈՒՉ ԱՆԴՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՅ

ՀԱՅՐԱՑՈՒՉ Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՑԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,  
ուշագրութիւն գարձնել իւ-  
րաքանչիւր մեքենայի վրայ  
ՍԻՆԿԷՐ ի յաշկանչիկն :



Չրի գաւեր և նորոգու-  
թիւններ , ՍԻՆԿԷՐ մեքենա-  
յից համար , յաճախորդաց  
սուեներուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ինձեքենայից  
եւ նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ-  
նէ ամենէն աւելի շահարածիները :  
Ապահովագրեալներուն արգէն  
վճարած է կամ ի նպաստ իրենց գու-  
մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ  
որ գրեթէ աշխարհի ուրիշ սրև է ըն-  
կերութեան մէկ միլիար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա .  
յացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ և  
և է ընկերութեան աւելի երաշխա-  
ւորութիւններ , ընդարձակ գործառ-  
նութիւններ և հրապարակի վրայ ա-  
ւելի ապահովագրութիւններ ունի և  
աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր  
գործակատար յԱղեքսանդրիա :